Հավելված 1
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
14-02-2025թ. N 54-Լ որոշմամբ
Գործում է սկսած 2025 թվականի փետրվարի 17–ից

Կարպիսա խանութների ցանցում կատարված վճարումների համար cashback-ի տրամադրման պայմաններ

1. Ընդհանուր դրույթներ.

1.1 **Արշավ՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից 01.01.2025թ-ից 31.12.2025թ-ը ներառյալ իրականացվող արշավ:
1.2 **Քարտ՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի կողմից նախքան սույն Արշավը և Արշավի ընթացքում թողարկված Visa Platinum, Travel, Visa Signature, Visa Infinite, Visa Infinite Special Edition, Visa Business, Visa Business Platinum և այլ բիզնես/պրեմիում դասի քարտեր:
1.3 **Քարտապան՝** Արդեն գործող կամ Արշավի շրջանակներում «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի կողմից թողարկված Քարտի քարտատեր:
1.4 Արշավին մասնակցելու դեպքում Քարտապանն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները, որոնք համարվում են վերջնական և անվիճարկելի:

2. Արշավի պայմաններ.

2.1 01.01.2025թ-ից 31.12.2025թ-ը ներառյալ Կարպիսա խանութների ցանցում կատարված վճարումների (այսուհետ՝ Վճարում) դիմաց Քարտապանները կստանան 5% cashback, եթե կատարված վճարման չափը գերազանցի 10 000 ՀՀ դրամը: Ընդ որում, 5% cashback-ը գործելու է 1.2 կետում նշված քարտերի պայմաններով սահմանված cashback-ից (առկայության դեպքում) անկախ:
Քարտի տրամադրման և սպասարկման այլ պայմանները սահմանվում են համապատասխան վճարային քարտի տեղեկատվական ամփոփագրով, որոնք հրապարակված են Բանկի կայքէջում:
2.2 Յուրաքանչյուր օրացույցային ամսվա ընթացքում կատարված Վճարումների համար Cashback-ը հաշվարկվում և վճարվում է հաջորդ ամսվա մինչև 10-րդ աշխատանքային օրը: Փաստացի ստացման ենթակա Cashback-ը Քարտապանին փոխանցվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը գանձելուց հետո:
2.3 Քարտապանների կողմից Արշավին մասնակցությունը կատարվում է ավտոմատ կերպով և լրացուցիչ գործողություն չի պահանջվում:
2.4 Բանկն իրավունք ունի սույն պայմանների և դրույթների մեջ ցանկացած պահի կատարել միակողմանի փոփոխություն և կիրառել փոփոխությունն անմիջապես՝ Բանկի պաշտոնական կայքում հրապարակելուց հետո: